

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37

ք. Երևան

«22» «07» 2026 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՍՈՒՍ ՇԻՆ» և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերությունները (համատեղ) (այսուհետև՝ Կապալառու), որոնք գործում են համաձայն 27.03.2026 թվականի կոնսորցիումի պայմանագրի, ի դեմս «ԱՐՍՈՒՍ ՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Դ.Հայրապետյանի և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Սարգսյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևանի կենդանաբանական այգու տարածքում ոռոգման ցանցի կառուցման** աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխացային ժամկետում:



3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, զործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պաշտոն որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտի և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:



4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 78900000 (յոթանասունութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_9 = U_9 / N_9 \times 40$, որտեղ՝

U_9 -ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

N_9 -ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

40 -ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

V_9 -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվառվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:



6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվա-տեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարել	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
4	Շինարարների համազգեստի վրա՝ շինարարություն իրականացնող կազմակերպության տարբերանշանի բացակայություն	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
5	Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի կողմից սահմանված նորմերի տեսաձայնագրման սարքերի բացակայություն	Տուգանք – պայմանագրային գնի 10% չափով Երկրորդ անգամ կրկնելու դեպքում՝ պայմանագրի խզում

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ ահաբեկով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտական կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհամոզականային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի՝ ռիսկը, իսկ վերջինս



պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագրի և



արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 24 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր հիմնարանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, 4.1 և 5 N հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունը**:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների ռազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից **տաս** աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՍՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե ք. Գավառ Զալաշյան 4
Բանկ Արմսվիսթանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011776000100
ՀՎՀՀ 08428808

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
Հասցե Արարատի մարզ,
գ. Ծախումյան, Արցախի 5
Բանկ Ակրա բանկ ԲԲԸ
Հ/Հ 220013333657000
ՀՎՀՀ 04225743

Պապիկյան

(ստորագրություն)

Կ.Տ.



Դ. Հայրապետյան

(ստորագրություն)



Ա. Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.



[Handwritten signature]

Հավելված թիվ 1
«22» ապրիլ 2026 թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևանի կենդանաբանական այգու տարածքում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ

NN	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Ընդհանուր արժեք / հազար դրամ /
	Ծավալաթերթ-նախահաշիվ-I գոտի				
	1. Հողային աշխատանքներ				
1	Ասֆալտընտոնե ծածկույթի կտրում խրամուղու աջ և ձախ կողմերով	մ	312.0	0.53	165.36
2	Ասֆալտընտոնե ծածկույթի նախնական փխրեցում ձեռքի հարվածահատ մուրճով	մ ³	6.5	2.68	17.42
3	Խրամուղիների քանդում ձեռքով՝ III-րդ կարգի գրունտներում կողալիցքով	մ ³	31	3.55	110.05
4	Նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում 0-5մմ խոշորության կլոր ձևավորված մասնիկներով ավազով	մ ³	23.6	6.19	146.084
5	Քանդված գրունտի, ա/բետոնե ծածկույթի և բետոնե սալիկների ձեռքով բարձում ա/ինքաթափի վրա	տ	54.2	0.48	26.016
6	Տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	54.2	3.79	205.418
7	Խրամուղիների ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից տուրանումով	մ ³	7.4	1.48	10.952
8	Խճի նախաշերտ h=10սմ	մ ²	55.0	1.22	67.1
9	Բիտումի տարածում 1000քմ-4,12տ բիտումի ծախսով	տ	0.230	266.58	61.3134
10	Ծածկույթի պատրաստում խոշորահատիկ ասֆալտընտոնից 6սմ հաստությամբ	մ ²	55.0	5.74	315.7
11	Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտընտոնից 4սմ հաստությամբ	մ ²	55.0	4.24	233.2
12	Բազալտե եզրաքարերի քանդում	զճմ	26.00	1.16	30.16
13	Քանդված բազալտե եզրաքարերի վերականգնում B15 դասի բետոնե հիմքով	զճմ	10.0	4.25	42.5
14	Նոր բազալտե եզրաքարերի վերականգնում բետոնե հիմքով	զճմ	16.0	12.93	206.88
15	Խրամուղիների քանդում ձեռքով՝ III-րդ կարգի գրունտներում կողալիցքով՝ անքավոր կաթիլային խողովակների համար	մ ³	12	3.55	42.6
16	Խրամուղիների ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից տուրանումով	մ ³	3.4	1.48	5.032
17	Ծառաբներում թասակների պատրաստում բնահողի քանդումով ձեռքով	տեղ	50.0	2.45	122.5
18	Խրամուղիների վերականգնում սերմնացանումով	մ ²	145.0	0.2	29.0
	Ընդամենը 1				1837.29



2. Տեխնոլոգիական աշխատանքներ					
1	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (PE)Dn160x9.5մմ, Pn=10մթն, փորձարկումով	մ	85.0	7.49	636.65
2	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (PE)Dn63x3,8մմ, Pn=10մթն, փորձարկումով	մ	160.0	1.36	217.6
3	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (PE)Dn40x2,4մմ, Pn=10մթն, փորձարկումով	մ	135.0	0.83	112.05
4	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (PE)Dn32x2մմ, Pn=10մթն, փորձարկումով	մ	320.0	0.68	217.6
5	Պոլիէթիլենե խողովակների մոնտաժում խրամուղիներում և ծառաբներում (PE)Dn16մմ, Pn=10մթն, փորձարկումով, անցքերի հեռավորությունը 40սմ, յուրաքանչյուր ծառին մոտեցնող խողովակի երկարությունը 12մ, ներառյալ թասակի շրջանագիծը	մ	600.0	0.66	396
6	Պողպատե էլեռակցվող պատյան խողովակների մոնտաժում խրամուղիներում (St)Dn159x3,5մմ	մ	30.0	8.06	241.8
7	Պողպատե էլեռակցվող պատյան խողովակների մոնտաժում խրամուղիներում (St)Dn108x3,5մմ	մ	53.0	5.57	295.21
8	Պողպատե էլեռակցվող պատյան խողովակների մոնտաժում խրամուղիներում (St)Dn57x3,5մմ	մ	67.0	3.17	212.39
9	Պողպատե խողովակների ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում	մ²	45.0	4.27	192.15
10	Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ Dn110/63	հատ	1	10.44	10.44
11	Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ Dn63/40	հատ	1	8.63	8.63
12	Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ Dn40/32	հատ	3	7.42	22.26
13	Պոլիէթիլենե եռաբաշխիչ Dn63	հատ	2	7.42	14.84
14	Պոլիէթիլենե եռաբաշխիչ Dn40	հատ	1	7.12	7.12
15	Պոլիէթիլենե եռաբաշխիչ Dn32	հատ	1	6.82	6.82
16	Պոլիէթիլենե խամուխային անցում Dn110x63	հատ	1	10.44	10.44
17	Պոլիէթիլենե խամուխային անցում Dn110x40	հատ	1	9.53	9.53
18	Պոլիէթիլենե խամուխային անցում Dn110x32	հատ	2	9.23	18.46
19	Պոլիէթիլենե խամուխային անցում Dn160-110-63-40-32-25x20	հատ	35	9.23	323.05
20	Պոլիէթիլենե անցում Dn110x63	հատ	1	9.38	9.38
21	Պոլիէթիլենե անցում Dn110x32	հատ	1	8.93	8.93
22	Պոլիէթիլենե անցում Dn63x40	հատ	3	8.33	24.99
23	Պոլիէթիլենե անցում Dn63x32	հատ	1	7.72	7.72
24	Պոլիէթիլենե անցում Dn40x32	հատ	4	7.27	29.08
25	Պոլիէթիլենե ինքնակարգավորվող խցափակիչ Dn63-20	հատ	15	9.96	149.4
26	Պոլիէթիլենե պարուրակային էզ/որձ կցորդիչ Dn20	հատ	70	4.22	295.4
27	Պողպատե պարուրակային էզ/որձ կցորդիչ Dn20	հատ	35	4.22	147.7
28	Մետաղե գնդային փականի մոնտաժում երկկողմանի ներքին պարուրակով Dn20	հատ	35	10.02	350.7
29	Պողպատե խողովակների մոնտաժում Dn20x2,5մմ	մ	3.5	1.65	5.775
ԸՆԴՀԱՆՈՒՐ 2.					3982.115
3. 1-ին գոտու փականային հանգույցներ և ֆիլտրացիոն կայան					
1	B7.5 բետոնի նախապատրաստական շերտի ստեղծում h=10սմ հաստությամբ	մ³	2.90	37.31	108.199
2	Միաձուլ երկաթբետոնե հիմնային սալի իրականացում B25 W4 դասի բետոնով	մ³	4.6	87.76	403.696
3	Ամրան Ø6A1	տ	0.02	474.84	7.59744
4	Ամրան Ø10A500C	տ	0.38	474.84	178.065
5	Միաձուլ երկաթբետոնե պատի իրականացում B25 W4 դասի բետոնով	մ³	6.3	87.76	552.888
6	Ամրան Ø6A1	տ	0.02	474.84	10.9232

7	Ամրան Ø8A500C				
8	Ամրան Ø12A500C	տ	0.23	474.84	110.1629
9	Միաձույլ երկաթբետոնե ծածկի իրականացում B25 W4 դասի բետոնով	տ	0.57	474.84	268.2846
10	Ամրան Ø6A1	մ3	2.9	108.92	315.868
11	Ամրան Ø12A500C	տ	0.014	474.84	6.64776
12	Թուփե ծանր մտոց	տ	0.36	474.84	169.043
13	Պողպատե DN219x4.5 պատյան-խողովակների տեղադրում	հատ	5.00	84.53	422.65
14	Մետաղական էլեմենտների երկշերտ յուղաներկում	տ	0.05	683.97	36.25041
15	Պատերի ջրամեկուսացում 2 շերտ բիտումե մածիկով	մ²	5.0	1.28	6.4
16	Հատակի ցեմենտավազե հարթաշերտ h=20մմ	մ²	42.0	1.29	54.18
17	Սեպավոր փականների մոնտաժում Dn150 Pn=16մթն.	մ²	9.0	1.33	11.97
18	Սեպավոր փականների մոնտաժում Dn100 Pn=16մթն.	հատ	3	169.29	507.87
19	Պողպատե էլեռակցվող կցաշուրթերի մոնտաժում Dn150 Pn=16մթն.	հատ	4	87.62	350.48
20	Պողպատե ազատ կցաշուրթերի մոնտաժում Dn150 Pn=16մթն.	հատ	4	25.58	102.32
21	Պողպատե էլեռակցվող կցաշուրթերի մոնտաժում Dn100 Pn=16մթն.	հատ	2	21.13	42.26
22	(HC)Պոլիէթիլեն միջադիր (PE)Dn160	հատ	8	15.06	120.48
23	(HC)Պոլիէթիլեն-մետաղ կցորդիչ (PE)Dn160/(St)Dn150	հատ	2	30.06	60.12
24	(HC)Պոլիէթիլեն-մետաղ կցորդիչ (PE)Dn110/(St)Dn100	հատ	4	34.59	138.36
25	Պողպատե խամուբային անցում (St)Dn150x100	հատ	5	22.51	112.55
26	Պոլիէթիլեն անցում (PE)Dn160x90	հատ	1	22.51	22.51
27	Պոլիէթիլեն արմունկ (PE)Dn160,a=90°	հատ	2	27.04	54.08
28	Պոլիէթիլեն եռաբաշխիչ PE)Dn160	հատ	1	28.55	28.55
29	Պողպատե խցափակիչ PE)Dn160	հատ	2	33.08	66.16
30	Պոլիէթիլեն եռակցվող խողովակների մոնտաժում (PE)Dn160x9.5մմ,Pn=10մթն, փորձարկումով	հատ	2	24.02	48.04
31	Պողպատե էլեռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (St)Dn159x3,5մմ փորձարկումով	մ	5.0	7.49	37.45
32	Պողպատե էլեռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (St)Dn108x3,5մմ փորձարկումով	մ	6.0	8.06	48.36
33	Պողպատե խողովակների երկշերտ յուղաներկում	մ	9.0	5.63	50.67
34	Փականների տակդիր Ø100մմ տրամագծի խողովակից Guc=6,5կգ	մ²	7.0	1.28	8.96
35	Գործարանային արտադրության ֆիլտրոկայանի ձեռքբերում,մոնտաժում,կարգաբերում,թողարկում Ընդամենը 3'	տ	0.0390	684.38	26.69082
	Ծավալաթերթ-նախահաշիվ-II գոտի				
	4. Հողային աշխատանքներ				9035.9783
1	Անֆալտբետոնե ծածկույթի կտրում խրամուղու աջ և ձախ կողմերով	մ	100.0	0.53	53.00
2	Անֆալտբետոնե ծածկույթի նախնական փխրեցում ձեռքի հարվածահատ մուրճով	մ³	3.5	2.68	9.38
3	Խրամուղիների քանդում ձեռքով՝ III-րդ կարգի գրունտներում կողալիցքով	մ³	203	3.55	720.65
4	Նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում 0-5մմ խոշորության կլոր ձևավորված մասնիկներով ավազով	մ³	157.0	6.19	971.83
5	Քանդված գրունտի,ա/բետոնե ծածկույթի և բետոնե սալիկների ձեռքով բարձում ա/ինքաթափի վրա	տ	289.0	0.48	138.72
6	Տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	289.0	3.79	1095.31
7	Խրամուղիների ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից տուրանումով	մ³	46.0	1.48	68.08
8	Խճի նախաշերտ h=10սմ	մ²	45.0	1.22	54.90



9	Քիտումի տարածում 1000քմ-4,12տ քիտումի ծախսով	տ	0.190	266.58	50.65
10	Ծածկույթի պատրաստում խոշորահատիկ ասֆալտբետոնից 6սմ հաստությամբ	մ²	45.0	5.74	258.30
11	Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտբետոնից 4սմ հաստությամբ	մ²	45.0	4.24	190.80
12	Քաղալտե եզրաքարերի քանդում	գծմ	22.00	1.16	25.52
13	Քանդած քաղալտե եզրաքարերի վերականգնում B15 դասի բետոնե հիմքով	գծմ	10.0	4.25	42.50
14	Նոր քաղալտե եզրաքարերի վերականգնում բետոնե հիմքով	գծմ	12.0	12.93	155.16
15	Խրամուղիների քանդում ձեռքով՝ III-րդ կարգի գրունտներում կողալիցքով՝ անքավոր կաթիլային խողովակների համար	մ³	24	3.55	85.20
16	Խրամուղիների ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից տուփանումով	մ³	6.8	1.48	10.06
17	Ծառաբներում թասակների պատրաստում բնահողի քանդումով ձեռքով	տեղ	100.0	2.45	245.00
18	Խրամուղիների վերականգնում սերմնացանումով	մ²	290.0	0.2	58.00
5. Տեխնոլոգիական աշխատանքներ					4233.06
1	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (PE)Dn160x9.5մմ, Pn=10մթն, փորձարկումով	մ	300.0	7.49	2247.00
2	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (PE)Dn125x7.4մմ, Pn=10մթն, փորձարկումով	մ	225.0	4.67	1050.75
3	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (PE)Dn110x6.6մմ, Pn=10մթն, փորձարկումով	մ	155.0	3.57	553.35
